Բրյուսել , 18 հուլիսի 2012թ.

A333/12

### Բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի հայտարարությունը

Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը երեկ տարածել է հետևյալ հայտարարությունը.

"*Հուլիսի 19-ին Լեռնային Ղարաբաղում տեղի են ունենալու <նախագահական ընտրություններ>: Վերահաստատում եմ, որ Եվրոպական միությունը չի ճանաչում այն սահմանադրական և իրավական դաշտը, որի համաձայն դրանք տեղի են ունենլու: Վերոնշյալ <ընտրությունները> չպետք է վնասեն Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի մասին որոշմանը՝ հակամարտության խաղաղ կարգավորման ընդհանուր համաձայնեցված շրջանակներում։*

*Վերահաստատում եմ Եվրոպական միության աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի և նրա համանախագահների ձեռնարկած կայուն ջանքերին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը։ Կողմերին կոչ եմ անում առավել մեծ ջանքեր գործադրել հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացի ուղղությամբ՝ հիմնվելով Մադրիդյան սկզբունքների վրա, որոնք թույլ կտան հաղթահարել ստատուս-քվոն։ Վերահաստատում եմ այս ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու ԵՄ-ն պատրաստակամությունը:"*